ԱՐՄԱՎԻՐԻ 1973 Թ. ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ՆՅՈՒԹԵՐԻՑ

(Նախնական հաղորդում)

Գ. Ա. ՏԻՐԱՅՅԱՆ

Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախմբի պեղումները 1973 թ. շարունակվեցին Արմավիրի բլրի գագաթին, արևմտյան լանջին և հյուսիս-արևմտյան մասում։ Արևմտյան լանջին պետք է ավարտվեր ուրարտական նորահայտ պարսպի բացումը և նրան հարող քառակուսիների ուսումնասիրումը (նկ. 1)։

Ինչպես պարզվել էր նախորդ տարիներին, նորահայտ այս պարիսպը ամրոցի հյուսիսում տեղադրված մուտքի մոտից դեպի հարավ ձգվելով՝ ամրոցի արևմտյան կողմի պաշտպանողական երկրորդ զուգահեռ գիծն էր կազմում։ Այն ունի համեմատաբար լավ պահպանված քարե ներքնամաս և օժտված է որմնահեցերով։ Վերջին, հինգերորդ որմնահեցի մոտ աշխատանքները շարունակելիս պարզվեց, որ պարիսպը որոշակիորեն թեքվում է ու իր հարավային ծայրում փաստորեն անկյունային աշտարակ է կազմում։ Սրա հարավային նորահայտ երեսը թվում էր թե ուղիղ գծով պետք է հարի այստեղ տեղադրված՝ մեծ դահլիճին արևմուտքից կցված զուգահեռ պատին, սակայն այն մոտ 5 մ վրա դեպի ներս անկյուն տալով՝ շարունակվեց նույն ուղղությամբ, առանց, սակայն, այդ պատին անմիջականորեն միանալու (նկ. 2)։ Այս հանգույցի ուսումնասիրումը հաջորդ տարիների պեղումների առաջնահերթ խնդիրներից մեկն է լինելու և նրա լուծումից կախված է ուրարտական ամրոցի կառուցապատման հիմնական դրվագներից մեկի վերականգնումը։

Անկյունային աշտարակին հարավից հարող քառակուսիների վերևի շերտերը, ի տարբերություն պարսպին կից մյուս հատվածների, աղքատ էին խեցեղենի և ոսկորների մնացորդներով, սակայն ներքին շերտերում հնագիտական նյութը, հիմնականում անտիկ ժամանակաշրջանի, աստիճանաբար ավելացավ, իսկ աշտարակի հիմքերի առջև ձգվող ժայռին հասնելով բացվեց տնտեսական նշանակության մի հոր (տրամագիծը 1 մ, խորությունը՝ 1,40 մ)՝ ոսկորների և խեցեղենի մնացորդներով։ Նրանից ոչ հեռու բացվող պատերի հիմքերը և հնագիտական նյութը վկայում են այստեղ գոյություն ունեցող հելլենիստական ժամանակաշրջանի կացարանի մասին, որի օրինական մասն է կազմում վերոհիշյալ հորը։

Անկյունային աշտարակի արևմտյան կողմից բացվեց ուրարտական ինչ-որ պատի համար որպես հիմք ծառայող ժայռի հարթեցված մի հատված։ Այստեղ գտնվեց երկաթե կացին։ Նրա հետ մեծ խորության վրա հավաքված խեցեղեն անկասկած հելլենիստական ժամանակաշրջանի է։

Պեղումները ընդարձակվեցին դեպի արևմուտք, ի հաշիվ լանջն ի վայր գտնվող քառակուսիների։ Այս տեղամասի համար բնորոշը մշակութային շերտի բարակությունն է, բայց այն ինքնին բավարար է շերտագրական դիտողությունների համար, տվյալ դեպքում՝ ուրարտական և հելլենիստական շերտերի

փոխհարաբերությունները մի անգամ ևս ճշտելու տեսանկյունից։ Բանն այն է, որ այս քառակուսիներում, որտեղ կան ուրարտական կառույցների բավականին լավ նշմարվող հետքեր, հելլենիստական դարաշրջանի շերտը վկայված է նրանց վրա ու անգամ նրանցից ներքև՝ ամենուրեք հասնելով մինչև մայր



Նկ. 1

հողը կամ ավելի ճիշտ՝ բնական ժայռը։ Այդ հանգամանքը ինքնին խոսում է տվյալ հատվածի ինտենսիվ յուրացման մասին հելլենիստական ժամանակաշրջանում։ 1973 թ. է՛լ ավելի ճշտվեցին արևմտյան մի պարսպից դեպի մյուսն ընթացող № 3 և № 4 պատերի եզրերը։ Նրանց միջև միջնորմային պատի հետքեր բացվեցին, իսկ № 2 և № 3 պատերի միջև անմշակ քարերից կազմված հարթակներ երևացին։ Նույն տարում բացվեցին նաև հինգերորդ նման պատի հետքեր։ Այն քիչ թեք է մնացածների նկատմամբ և կարծես երկու իրար միացած պատերից է կազմված։ Դրանցից հյուսիսայինը սկիզբ է առնում նորահայտ ուրարտական պարսպի անկյունային աշտարակի տակից, որտեղ նրան որպես հիմք կարող է ծառայած լինել հատկապես հարթեցված ժայռը։ Հարավային պատը քիչ ներքևից է սկսվում և առաջինի համար կարող է որմնահեցի տեղ ծառայած լինել։ № 5 այս հաստահեղույս պատի քարերը տեղ-տեղ ավելի լավ են պահպանված և կազմում են մինչև երեք շարք։ Իջնող տեղանքին հարմարվելու համար, մյուս պատերի նմանությամբ, այն աստիճանավոր տեսք ունի։ Հնագիտական նյութը, բացառությամբ մի քանի միջնադարյան կավանոթների բեկորների, անտիկ է, նույնիսկ անմիջականորեն ժայռի վրա նստած շերտերում։ Այստեղ գտնվեցին տեղական արտադրանքի կավանոթների բեկորներ՝ հասարակ և գունազարդ, հելլենիստական արևմտյան կենտրոններից բերված կավե սրվակների բեկորներ, ապակյա անոթի բեկորներ, արձանի պատվանդան, խճանկարի քարեր։ Վերջինները գտնվեցին ուրարտական պատի քարե ներքնամասի վրա կուտակված շերտում։ Ամրոցի մուտքի մոտ ուրարտական հյուսիսային պարիսպը ելուստ է կազմում։ Այստեղ, ինչպես պարզե-

ցին նախորդ տարվա պեղումները և ինչպես հաստատվեց 1973 թ., տեղադրված են եղել ուղիղ շարք կազմող քառանկյունի վոքր սենյակներ, որոնք հարում են հյուսիսային պարսպին։ Ի տարբերություն նախորդ տարիներին պեղված սենյակների, № 4 և № 5 սենյակների վերևի շերտերում միջնադարյան



Նկ. 2

շինարարական հետքեր չեն պահպանվել, թեպետ հանդիպում են նույն ժամանակաշրջանի իրեր։ Սենյակներում կային փլված աղյուսե պատերի զանգվածներ՝ տանիքի ծածկի վառված փայտի ու եղեգի հետքերով։ Այդ մոխրաշերտը պարզ է երևում հարավային համեմատաբար լավ պահպանված աղյուսե պատի վրա և հավանաբար կազմում էր միջնադարյան մշակութային կուտակման ներքևի սահմանը։ Անտիկ խեցեղենի առկայությունը քիչ ավելի խորը հորիզոններում չի խոսում ամրոցի այս հատվածում անտիկ շերտի գոյության

մասին, թեպետ պետք է նշել, որ մյուս սենյակների հետ համեմատած խեցեղենը ավելի առատ է ու բնորոշ։ Սենյակների պատերի աղյուսե և քարե մասերի սահմանագծի վրա սկսվեց բավականին համատարած հրաբխային խարամի շերտ՝ մոտ 0,50 մ հաստությամբ, որը լցնում էր սենյակների ներքնամասը մինչև հատակը։ № 5 սենյակում խարամի վրա նաև կավե բարակ շերտ երևան եկավ, որը կարող էր հատակի տեղ ծառայած լինել։ Խճի հետ և նրանից վերև գտնվեցին ուրարտական կավանոթների բեկորներ, սենյակների ներքևի մասերում և բուն հատակի վրա ոչ մի նյութ չհայտնաբերվեց։ № 1 սենյակի նմանությամբ, որտեղ ուրարտական նյութը հայտնաբերվել էր երկու տարբեր մակարդակներում, այստեղ էլ կարելի է ենթադրություն անել երկու շերտի առկայության վերաբերյալ, կապված՝ մեկը սենյակի կառուցման ու նրա բուն հատակի հետ, մյուսը՝ սենյակում լցրած հրաբխային խարամի, խճի վրա նըստած հատակի հետ։ Սակայն նյութի իսպառ բացակայությունը սենյակների ամենաներքևի հորիզոններում չի բացառում նաև այն, որ խիճը լցված է եղել ինչ-ինչ նպատակներով հատակի մակարդակը բարձրացնելու կամ այն ուղղելու միտումով։

Բլրի գագաթին աշխատանքները կենտրոնացան բարձրադիր շենքից դեպի արևելք ձգվող մասում։ Այստեղ բացվեցին միջնադարյան պատերի հետքեր, որոնց մեջ օգտագործված էին ուրարտական և անտիկ դարաշրջանի քարեր ծիծեռնակի պոչի ձև ունեցող փոսիկներով՝ քարերը իրար միացնող փայտե կամ մետաղե կապերի համար։ Այս պատերը, ըստ երևույթին, գագաթի շենքին տարբեր կողմերից հարող միջնադարյան կացարանների մասն էին կազմում։ Այստեղ ևս, քիչ դեպի արևելք, բացվեց մի փոքր, բայց կանոնավոր հատակագիծ ունեցող շենքի ներքնաշարը, կազմված տուֆի և բազալտե լավ մշակված քարերից՝ ծիծեռնակի պոչի նման փոսիկներով։ Շենքը ուղղված է դեպի արևմուտք և այս կողմից նրա պատը ելուստավոր է։ Ներսից՝ հարավային և հյուսիսային պատերի երկայնքով քարե նստարանների մնացորդներ բացվեցին։ Նորահայտ այս շենքը կարծես հատուկ հարթակի վրա է տեղադրված եղել, որի բազալտե քարերից շարված արևելյան եզրը բացվեց։ Շենքի շրջապատում և նրա ներսում միջնադարյան նյութեր գտնվեցին, առանձնապես դաջազարդ կարասների և ջնարակած անոթների բեկորներ, որոնք շենքի մնացորդները թվագրում են XI—XIII դարերով։

Հետախուզական պեղումներ ձեռնարկվեցին բլրի արևելյան լանջին, որտեղ նախորդ տարիներին բացվել էին ուշ բրոնզի և վաղ երկաթի դարի դամբարաններ։ Ընթացիկ տարում այստեղ բացվեցին կացարանի հետքեր՝ հատակ, ժայռաբեկորներով շրջափակված օջախ՝ մոխրով և հին բնակավայրերին բնորոշ իրեր, այդ թվում աշխատանքային գործիքներ։

Արմավիրի բլուրի հնագիտական ուսումնասիրությունը հաստատում է հուշարձանի բազմաշերտ բնույթը, թեպետ պետք է նշել, որ հելլենիստական դարաշրջանի նյութերը առավել առատ, ուշագրավ ու կարևոր են։

Ուրարտական նյութը հիմնականում ներկայացված է խեցեղենով, որի գերակշռող մասը, ինչպես արդեն նշվեց, գտնվել է հյուսիսային պատին կից տեղադրված № 4 և № 5 սենյակներում։ Արևմտյան տեղամասում պեղված համեմատաբար ընդարձակ տարածությունից, որը հարուստ է ուրարտական կառույցների հետքերով, գտնվեցին ուրարտական խեցու երկու բեկոր միայն, որ վկայում է ուրարտական հնագիտական նյութի իսպառ ոչնչացման մասին ա-

վելի ուշ ժամանակներում։ Վերոհիշյալ սենյակներում հանդիպում են կարմիր փայլեցրած, կարմրավուն և դժգույն մակերեսով անոթների բեկորներ. վերջինները քանակապես գերակշռում են։ Դրանք մեծ մասամբ քրեղաններ ու թասեր են գնպի ներս ծռված հաստ շրթերով, դրսից բնորոշ կորությամբ ու բնորոշ ակոսներով։ Երկու բեկորների վրա պահպանվել են նշաններ, մեկը աշտարակաձև՝ դրոշմված, մյուսը սլարաձև՝ փորագրված։ Ուրարտական ծագում պետք է վերագրել հավանաբար նաև արևմտյան լանջին գտնված քարե թասերին՝ կլորացող շրթով, թեք պատերով և հաստ տափակ հատակով։

Ամրոցի տարածքում գտնված նախաուրարտական ժամանակաշրջանի սակավաթիվ նյութերից է օբսիդիանե երկսայր գործիքը, որը ժամանակագրորեն միանում է նախորդ տարիներին գտնված օբսիդիանե նետասլաքներին։

Հին հայկական, հելլենիստական դարաշրջանի նյութերի գերակշռող մասը հայտնաբերվել է ամրոցի արևմտյան մասում, այժմ լավ բնորոշվող շերտից։ Այդ նյութերը աչքի են ընկնում իրենց բազմազանությամբ ու թեպետ առատորեն է ներկայացված խեցեղենը, հանդիպում են նաև մետաղե, քարե, ապակե իրեր, կավե արձանիկի և խճանկարի բեկորներ։ Խեցեղենի մեծ մասը նախորդ տարիներին հանդիպող ձևերի կրկնությունն է հանդիսանում, թեպետ կան և նորություններ (նկ. 3)։ Սափորները բաց գույնի են, հաստիրան, եռաթերթաձև կամ սրածայր բերանով, աղեղնաձև կանթով։ Բաց գույնի կճուճները, որոնք աչքի են ընկնում իրենց լայն իրանով և ցածր վզով, երկու տիպի են՝ լայնաբերան, շուրթը ծռված դեպի դուրս՝ խոհանոցային կճուճների նման և համեմատաբար փոքր կլոր բերանով։ Սրանց վերևի մասը շուրթով հանդերձ կարմրավուն կամ սրճագույն ներկով է պատած։ Խոհանոցային կճուճները սովորական ձևի են, մոխրագույն կամ սև։ Մի փոքր կճուճ, որն արտաքին հատկանիշներով պատկանում է այս խմբին, իր երկկոնաձև իրանով, բռնակով և հավանաբար ծորակով կարող է նմանվել 1971 թ. № 1 անոթին։ Կարասները մի քանի տիպերի են։ Բնորոշ խումբ են կազմում ցածր վզով քիչ դեպի դուրս թեքվող շրթով օրինակները՝ նման նախորդ տարիներին հրատարակվածներին։ Սրանք բոլորը օխրագույն են։ Կան կարմրավուն կարասների բեկորներ, աստիճանաբար դեպի դուրս լայնացող շրթերով։ Տափաշշերը, որոնց թիվը պեղումների ընթացքում տարեցտարի աճում է, ներկայացված են բազմաթիվ բեկորներով (շրթեր, կանթեր և այլն)։ Այս անոթներին բնորոշ գոտիները, որպես կանոն, սրճագույն են կամ վառ կարմիր գույնի։ Քրեղանները տարածված տիպի են, հաստացող շուրթը դեպի դուրս հակված, տակից ներճկված լայն գոտիով, շուրթը և պսակը ներսից կարմրավուն ներկով պատած։ Կան դեպի ներս ծռվող շրթերով քրեղաններ ևս։ Մեծ խումբ են կազմում թասերը. պրոֆիլավորված շրթերով խաչազարդ մեծ չափերի թասեր, որոնք կարող են նաև պնակներ համարվել, և փոքր չափերի նույն տիպի կամ ուղիղ շրթերով թասեր։ Ծորակավոր միակ անոթը ունի ուղիղ կտրված, քիչ դեպի ներս հակված շուրթ։ Ծորակը կարճ է, գլանաձև և թեպետ շրթի տակ է դրված, չի կպչում նրան, դրանով ևս տարբերվելով լայն տարածում գտած մյուս օրինակներից։ Ըմպանակները խորը և ծանծաղ տիպի են, կարմրավուն, սրճագույն, շագանակագույն և սև փայլեցրած։ Կիսաձվաձև խոշոր, խորը գավաթները շրթի տակ ունեն թեթևակիորեն ներճկված գոտի. ներսից ամբողջապես, իսկ դրսից կիսով չափ. անոթը ծածկված է կարմրավուն ներկով։ Ճրագները սովորական տիպի են, քթերը լավ արտահայտված։ Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում սև փայ-

լեցրած փիալայի բեկորը, կլոր ուռուցիկ զարդով, որը, սակայն, կարող է և անոթի հատակի մաս համարվել։ Ուշադրության արժանի է սրածայր հատակով մեծ կարասի (ամֆորայի) զանգվածեղ ներքնամասը, մակերեսը բաց շագանակագույն, փայլեցրած, ըստ ձևի և արտաքին մշակման հար ու նման 1962 թ. N 37 անոթի հատակին։ Արմավիրի խեցեղենը հարստացավ նաև այսպես կոչված ձկնամանի մի շրթի բնորոշ բեկորով։ Այս ափսեատիպ անոթները օղակաձև ոտքով են, դեպի ներքև ծռված ու կախված եզրով, հատակի՝ ներսից թմբաձև կամ ակոսավոր մշակումով։ Սրանք հունական աշխարհում լայն տարածում գտած ձևերից են, որոնք հանդիպում են նաև Հայաստանում, օրինակ՝ Արտաշատում։ Արմավիրի բեկորը ծածկված է բաց-շագանակագույն փայլեցրած անգոբով։ Ի վերջո պետք է նշել կավե սկահակի կլոր ոտքի, ափսեի և տաշտի բեկորները։

Քննության առնված խեցեղենը թվագրվում է մ. թ. ա. III—I դարերով. թերևս մի բացառությամբ, որը վերաբերում է Գառնիի մ. թ. առաջին դարերի խեցեղենի նման դեղին անգոբով պատած ու ակոսներով հարդարված բեկորին։

Արմավիրի խեցեղենի համար խիստ բնորոշ գունազարդ խումբը հարստացավ մի քանի նոր նմուշներով, որոնց մեջ ուշադրության արժանի են սրճագույն թռչուններով զարդարված բեկորը, գունազարդ շրթերով թասերի բեկորները։

Թեպետ բերովի խեցեղենի քանակը ավելանում է դանդաղորեն, այն մեծ նշանակություն ունի Արմավիրի առևտրական կապերը որոշելու տեսակետից։ Այդ խեցեղենը, որը համեմատաբար լավ է ուսումնասիրված, օգնում է նաև հնագիտական շերտերի ճիշտ թվագրմանը։ 1973 թ. գտնված իրերը կավե սրրվակների բեկորներ են, մեկը հաստապատ, մոխրագույն կավից, մյուսը՝ բարակ կարմրագույն կավից։ Նման սրվակներով, որոնց քանակը Արմավիրում աստիճանաբար ավելանում է, սովորաբար տեղափոխում և պահում էին անուշահոտ յուղեր։

Քարից պատրաստված իրերը ներկայացված են բազալտե և չեչաքարե խորանարդաձև և օվալաձև կոկիչներով, սրաքարերով և սկահակի բեկորներով։ Սկահակի բեկորները կանաչավուն պորֆիրիտից են պատրաստված։ Այս անոթներին բնորոշ շուրթը դրսից կոր է, վերևից՝ տափակ, իսկ ներսից ուղիղ անկյուն է կազմում անոթի պատի հետ։ Ոտքը չի պահպանվել, բայց որ այն եղել է, վկայում է հաստացող հատակը։

Գտնված ապակու բեկորները սակավաթիվ են։ Կան բեկորներ, որոնք թվագրվում են հելլենիստական ժամանակաշրջանով, սրանք անկյան տակ դեպի դուրս ծռվող եզր-շուրթ ունեն և Ժ. Խաչատրյանի կարծիքով քառանկյունի, կոր պատերով անոթի մասն են կազմում, որի մի քանի այլ բեկորները հայտնաբերվել են 1971 թ.։

Մյուս բեկորը հավանաբար սրվակաձև անոթի շրթի և վզի մասն է և կարող է թվագրվել մ. թ. առաջին դարերով։

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում կավե արձանիկի պատվանդանի մասը (նկ. 3)։ Այն պատրաստված է կարմրավուն կավից և պատած է դեղնավուն անգոբի շերտով, որի վրա երևում են կարմիր գույնի ներկի հետքեր։ Պատվանդանը, որը սնամեջ է, պատկերում է ինչ-որ գահի կամ մահճի մաս, լավ պրոֆիլավորված ոտքերով։ Կողքից երևում են հավանաբար երեխայի ոտքեր։ Ըստ երևույթին սա Արտաշատում հանդիպող նստած մոր և կողքին կանգ-

նած երեխայի պատկերող արձանիկների[1] ավելի ճոխ տեսակն է և գալիս է լրացնելու Արմավիրի հելլենիստական ժամանակաշրջանի տերակոտների փոքրիկ, բայց ուշագրավ հավաքածուն։

1973 թ. հետաքրքիր գյուտերից պետք է համարել հելլենիստական դարաշրջանի խճանկարի քարե հատիկները։ Այդ ժամանակի մասին են վկայում շեր-



Նկ. 3

տագրական դիտողությունները (քարերը գտնվել են ուրարտական պատի վրայի շերտում) և անտիկ աշխարհի զուգահեռները։ Դեռևս դասական ժամանակաշրջանում Հունաստանում և հարակից երկրներում զարգանում է գետաքարերից կազմված խճանկարը, որը հարատևելով, հելլենիստական ժամանակաշրջանում աստիճանաբար փոխարինվում է խորանարդներից կազմված խճանկարով. սրա փայլուն օրինակը Հայաստանում մեզ հայտնի է Գառնի ամրոցից։ Արմավիրի խճանկարի քարերը տափակ են կամ քիչ հաստ, սպիտակավուն, մոխրագույն և կանաչավուն։ Բոլորի վրա պահպանվել են շաղախի հետքերը, որի մեջ շարում էին քարերը՝ տարբեր պատկերներ կազմելու համար։ Նման խճանկարներ հայտնի են Օլինթոսից (V—IV դդ. մ. թ. ա.), Պելայից (IV դար մ. թ. ա.), Պրիենեից (IV—II դդ. մ. թ. ա.), Դելոս կղզուց (II դար մ. թ. ա.), Հյուսիսային մերձսևծովյան քաղաքներից՝ Օլվիա (III դար մ. թ. ա.), Խերսոնես (III—II դդ. մ. թ. ա.)[2]։

---

[1] Ф. Тер-Мартиросов, Терракоты из Арташата, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. դիտ.), 1973, № 7։

[2] «Эллинистическая техника». Сборник статей под ред. акад. И. И. Толстова, М.—Л., 1948, էջ 116—117, նկ. 35, 36; Е. И. Леви, А. Н. Карасев, Дома античных городов Северного Причерноморья. Античные города Северного Причерноморья, М.—Л.,

Արմավիրում գտնված մետաղե իրերը այնքան էլ շատ չեն, բայց նրանք թույլ են տալիս նոր տեսանկյունից դիտել Հայաստանի հելլենիստական դարաշրջանի մետաղագործության վիճակը։ Խոսքը առաջին հերթին երկաթե կացինի մասին է, որն իր չափերով ու ձևով միանգամայն ուշագրավ է (նկ. 4)։

Նկ. 4

Այն մոտ 27 սմ երկարություն ունի և 5—7 սմ լայնք։ Մի ծայրում վերևից թեք դրված է կոթառը, մյուս ծայրում հարվածող մասը ծռվում է դեպի ներքև։ Յուրահատուկ ձևի այս գենքը առայժմ իր զուգահեռները չունի Հայաստանի նմանօրինակ նյութերում։ Ինչպես արդեն տեսանք, կացինի շերտագրական միջավայրը ակնարկում է նրա վաղ հելլենիստական ժամանակաշրջանով թվագրվելու մասին։ Այդ դեպքում ավելորդ չէր լինի հիշատակել Մովսես Խորենացու «Հայոց պատմության» Երվանդի և Արտաշեսի մրցակցության եզրափակող դրվագները պատկերող գլուխը, որտեղ նկարագրված է Երվանդի մահը։ «Իսկ մի ոմն ի զինուորացն մտեալ ետար վաղերը զգլուխն Երուանդայ, և ցրուեաց զուղիղն ի յատակս տանն»... ասում է Խորենացին (II, 46)։ Բացառված չէ, որ վաղերը մարտական կացինի հենց այն տեսակն է, որի օրինակը հայտնաբերվել է Արմավիրում։ Նման կացիններ հանդիպում են Անդրկովկասի բրոնզեդարյան նյութերում։ Կողբիսում նրանք ծառայում էին մացառուտները կտրելուն[3]։ Մետաղե մյուս իրերը երկաթե դամեր են, տարբեր չափերի, ինչպես նաև բրոնզե մի ապարանջանի բեկոր և երկաթե շիգղ (ֆիբուլա)։ Ապարանջանը օձագլուխ է և հավանաբար ներկված մեջբով, ինչպիսիր հանդիպում են արևմենյան և հելլենիստական ժամանակաշրջանում։ Շիգղը անկյունավոր է, նման Ջրառատի վաղ հայկական դամբարանում գտնված երկաթե շիգղին[4]։

Միջնադարյան նյութը համեստ բնույթ ունի։ Խեցեղենը ներկայացվում է երկկոնաձև իրան ունեցող կճուճների բեկորներով, դեպի դուրս ծռվող շրթով և կարճ տափակավուն կանթով։ Սրանք բաց դույնի են ի տարբերություն անցյալ տարիներից հայտնի սև կամ գորշագույն օրինակների։ Ուշադրության արժանի են գոտեկարգ, զրոշմագարդ կարասների բեկորները, վրան թռչունի, ծառերի և այլ կենդանիների պատկերներով՝ հայտնի Անիի և Դվինի պեղումներից։ Պետք է հիշատակել չնարակած մի շարք նմուշներ, այդ թվում և կապտա-կանաչավուն չնարակի շերտով պատած, վրան հերալդիկ դիրք ընդունած թռչունների պատկերներով հատակի մասը, չինական սելադոնի բեկորը։ Աղորիքի փոքր չափերի վերին բարը՝ բազալտից, թեշիկի խոշոր գլուխները՝ ոսկո-

1955, նկ. 24, 25; В. Д. Блаватский. Античная археология Северного Причерноморья, М., 1964, նկ. 44։

[3] Д. П. Кориде. К истории колхской культуры. Тбилиси, 1965.

[4] Л. О. Мнацаканян, Г. А. Тираци н. Новые данные о материальной культуре древней Армении. ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1961, № 8, տախտ. 2։

րից և կավե անցքավոր իրերը (գուցե ծանրոցներ) գտնվել են վերևի շերտերում, բայց նրանց ստույգ պատկանելությունը դեռ պետք է պարզել։

1973 թ. պեղումները մեկ անգամ ևս հաստատեցին Արմավիրի բազմաշերտ բնույթը, հատկապես ընդգծելով նրա բացառիկ նշանակությունը ուրարտական և հայկական շերտերի վերհարաբերությունը պարզելու գործում։ Բավականին հստակորեն նշմարվող և արդեն բազմիցս ֆիքսացիայի ենթարկված ուրարտական և հայկական մշակութային մնացորդների՝ ճարտարապետական և հնագիտական հաջորդականության պատկերը Արմավիրը դարձնում է Հայկական լեռնաշխարհի այն հազվագյուտ հուշարձաններից մեկը, որտեղ այդ պրոբլեմը հնարավոր է ուսումնասիրել ամենայն մանրամասնությամբ։

ИЗ МАТЕРИАЛОВ РАСКОПОК АРМАВИРА В 1973 ГОДУ

(Предварительное сообщение)

Г. А. ТИРАЦЯН

(Резюме)

В ходе археологических работ была раскрыта угловая башня урартской западной оборонительной стены. Этим фактически было закончено ее обследование. Между двумя западными оборонительными сооружениями был раскрыт фундамент идущей в перпендикулярном направлении очередной стены. В северной части крепости было продолжено изучение расположенных у самой оборонительной стены комнат. Примерно на уровне каменной части стены они оказались забутованными местным вулканическим шлаком, создающим новый, более высокий уровень пола. Археологический материал урартского времени представлен керамикой, клейменной или с процарапанными знаками.

У восточного подножия холма, где ранее были обнаружены погребения эпохи железа, раскопаны остатки жилища (пол, очаг), указывающие на существование здесь древнего поселения. Найденный археологический материал датируется в основном VII в. до н. э. и помогает выявить то новое, что имелось во взаимоотношениях урартов с племенами Араратской равнины.

Выявлением остатков стен и хозяйственной ямы у самого конца ранней урартской западной оборонительной стены завершено также изучение примыкающего к ней целого ряда жилищ эллинистического времени, установлена важная особенность их планировки. К западу, ниже по склону, строительные остатки эллинистического времени не сохранились, за исключением следов мозаичного пола, состоящего из характерных для данного времени голышей с явными остатками закрепляющего их раствора.

Найденный в эллинистических слоях археологический материал многообразен. Керамика отличается большим разнообразием, хотя наблюдается повторение ранее известных форм. Определенный интерес представляет обломок терракотовой статуэтки с остатками изображения, по-видимому, кресла, и следами краски красного цвета. Среди

металлических предметов особое место занимает железная секира или топор, найденный в нижних горизонтах эллинистического слоя. Эта уникальная находка вместе с обнаруженным в прежние годы в Армавире целым рядом металлических изделий позволяет по-новому взглянуть на состояние металлопроизводства в Армении эллинистического времени.

На вершине холма, к востоку от стоящего здесь каменного сооружения, был раскрыт нижний ряд кладки маленького, правильных очертаний здания, сложенного частично из квадров эллинистического времени (на них имеются глубокие гнезда для скреп в виде ласточкина хвоста). Здание ориентировано на запад. По найденным в здании обломкам карасов с рельефными поясками оно датируется XI—XII вв. до н. э.